



# ԱՌՄԱԶՆՈՐԳՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՒՆ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թիւ. 28914

Փետրուար 27, 1985

Արժանաշնորհ  
Տ. Գառնիկ Բհնյ. Հալլաճեան  
Հովիւ Ս. Խաչ Եկեղեցւոյ  
Նախագահ Ճիական Խորհուրդի  
Եռւնիւրն Սիթի.

Սիրելի Տէր Գառնիկ,

Ստացած ենք Յունուար 31, 1985 թուակիր ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ ձեր նախագահութեամբ Յունուար 27ին գումարուած համայնքիդ Ճիական ժողովին մէջ կատարուած է Ճիական Խորհուրդի վեց անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Եյսու գիրով կը վաւերացնենք Ճիական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան ղրկել Ճիական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամոց անուանները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով Ճիական Խորհուրդի նոր կազմը, ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն կը մաղթենք յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունել

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

Ֆիլիփ Արփիարեան  
Արմէն Գալպեան  
Չարլզ Շենկուլեան  
Ռապրթ Պորկըրսըն  
Ռիչըրտ Թարգեան  
Արփինէ Սպարպարօ